




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

106

Հ. ԼՈՎԶԱՆՆԻՍՅԱՆ

Հ. Ս. Խ. Հ. ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ,
ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԸ
(1928/29 – 1932/33 թ. թ.)

Նվիրվում է
բնկ. ՍՍԲԱՆԱԶ ՄԻՍՎԵՐՆԻ հիշատակին

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՁԵՐԵՎՊՆ-1930

492
117

Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

37(47.925)

Հ. Ս. Խ. Հ. ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ
ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԸ
(1928/29 – 1932/33 թ. թ.)

Նվիրվում է
բնկ. ԱՍԳԱՆԱԶ ՄՈՒՎՃԱՆԻ ճիւղատեղիին



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ-1930



117-ԱԳ-1

Հրատ. № 1158

Գրառես. № 2937 (բ) Պատվ. № 1383 Տիր. 4000

Պետհրատի Յերկրորդ Տպարան Յերևանում

Հ. Ս. Խ. ԿԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԸ

Ժողովրդական լուսավորութեան հնգամյակը այն ուժեղ ազդակներից գլխավորն է, վոր կոչված է կուլտուրական հեղափոխութեան գործը իրապես և գործնականորեն կենսագործելու, բարձրացնելով լայն մասսաների կուլտուրական մակարդակը և տալու մեր ժողովրդական տնտեսութեան վերակալութեան ուժեր:

Իսկ հայտնի չէ, վոր մեր ժողովրդական տնտեսութեան զարգացման և մեր մասսաների կուլտուրական մակարդակի միջև կա զգալի տարբերություն:

Մեր ժողովրդական լուսավորութեան հնգամյա պլանը զալիս է հիմնականում լուծելու այդ խնդիրները: Նրա հիմքում դրված են հետևյալ հարցերը:

ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Ժողովրդական լայն զանգվածների կուլտուրական և քաղաքական մակարդակի վերելքի խոչընդոտ անդրադիտութեան վերացումը այն հաշվով, վորպեսզի անդրադիտութեան վերացման գալուցներով անցկացվեն նորմալ գալուցներով չընդգրկված մինչև 18 տարեկան հասակ ունեցող պատանիները, գլուղացիական

բնակչութիւնը 18-ից մինչև 25 տարեկան հասակը և բանվոր բնակչութիւնը մինչև 35 տարեկան*):

Բնակչութեան անգրագիտութեան վերացման աշխատանքի ծավալին պետք է համապատասխան զարգացում և թափ ուսման Բարձրագույն Լուսավորութեան Վարչութեան բոլոր ձեռնարկումները և մասնաձևերը: Անհրաժեշտ է տալ ըստ ամենայնի լարված աճում աղումներին, խրճիթ-ընթերցարաններին, ներկայացումներին, գրագրարաններին, կինո և ռադիոֆիլադելֆին, միաժամանակ և այս բնագավառում սպասարկող հրատարակչական գործին: Լայն կերպով պետք է դրվի և կազմակերպվի հեռակա ուսուցման սիստեմը:

2. Հետևյալ հարվածային հարցն է բնակչութեան պրոֆեսիոնալական անգրագիտութեան վերացումը: Հնգամյակում պետք է անցկացվի բանվորների, գյուղացիների և ծառայողների մասնաձևերի-տեխնիկական վերադաստիարակութիւնը այն հաշվով, վոր մինչև 35 տարեկան բանվորների ամբողջ կազմը ընդգրկված լինի տեխնիկական վերապատրաստման կարճատև կուրսերով, չուրաքանչյուր շրջանում պետք է կազմակերպված լինի տոնվազը մեկ ագրիկուլտուր դասընթացը և մեկական տնայնագործական-տեխնիկական կուրսեր, իսկ ծառայողներն ընդգրկվում են քաղաքական դաստիարակութեան կուրսերով:

*) Ինչպես տեսնելու յենք, կյանքն ընթանում է ավելի արագ, քան հնգամյա պլանը: Նոր վերամշակվելիք լուսավորութեան հնգամյա պլանում անգրագիտութեան վերացման դպրոցները պետք է ընդգրկեն ամբողջ անգրագիտ ազդարնակութիւնը մինչև 30 տարեկան հասակը:

3. Յերկարատև կուրսերի սիստեմը պետք է ուղղված լինի արտադրութեան մեջ զբաղված վորակյալ բանվորների, տեխնիկների և վարպետների ուսուցմանը և ծառայի իրեն տեխնիկայի նոր պայմաններին և արտադրութեան ռացիոնալ կազմակերպութեան հարմարեցման միջոց:

4. Կարևորագույն հարկերից մեկն է ընդհանուր նախնական պարտադիր ուսման կիրառումը: Հնգամյակի ընթացքում պարտադիր ուսումը մտցվում է քաղաքներում և քաղաքատիպ վայրերում և մատչելի է դառնում գյուղական վայրերում, ստանալով դպրոցական հասակի չերեխաների մաքսիմալ ընդգրկումը:

5. Ժողովրդական տնտեսութեան համար վորակյալ բանվորական ուժի արտադրութիւնը համապատասխան ժողովրդական տնտեսութեան կարիքներին և նրա զարգացման տեմպին:

Ահալասել այն զխավոր դիրեկտիվները, վորոնք ընդունված են 5-ամյա լուսավորութեան պլանի հիմնական խնդիրներ:

Ա. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Լուսավորութեան այս հատվածն ընդգրկում է նախադպրոցական դաստիարակութիւնը (մանկապարտիզ և մանկական հրապարակներ) և մանկութեան սոցիալ-իրավական պահպանութիւնը, ընդհանուր պարտադիր ուսուցումը, բարձր տիպի, Բ. աստիճանի դպրոցները (7-ամյակներ, գյուղացիներ, 9 և 10-ամյա դպրոցներ):

Բ. ՆԱԽԱԳԱՐՈՑԱԿԱՆ ԴԱՍՏԵՐԵԿՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցական կրթությունն ընդգրկում է 4—7 տարեկան հասակի լեռնականներին: Այդ հասակի բնակչության թիվն է Հանրապետության մեջ 1927-28 թվին—100,800, իսկ 1932-33 թ.—124.100 լեռնիսա:

Մանկապարտեզներում սովորում են 1927-28 թ. 2,900 լեռնիսա, իսկ 1932-33 թ. ծրագրվում է ներգրավել 6209 լեռնիսա: Աճումը կազմում է 114 տոկ.: Ընդգրկումը 1927-28 թ. 2,9 տոկոսից բարձրանում է 1932-33 թ. 5,0 տոկ.: Մանկական հրապարակներում 1927-28 թ. ներգրավված է 1,600 լեռնիսա, 1932-33 թ.՝ 6280 լեռնիսա. աճումը կազմում է 390 տոկ.: Ընդգրկումը հասնում է 5,0 տոկ.:

Ուշագրավ է, վոր մեզ մոտ նախադպրոցական դաստիարակության ընդգրկման (մանկապարտեզներում) 5,0 տոկոսը ամենաբարձրն է Միություն մեջ: Ռուսաստանի ՄԽՖ Հանրապետության մեջ 5-ամյակի վերջում ընդգրկումը հասնելու է 2,5 տոկոսի:

Մանկապարտեզները և մանկական հրապարակները կնոջ ընտանեկան իրավագույնը զրուծելուց աղատագրման և հասարակական կյանքի մեջ ներգրավման ամենաակտուալ միջոցներից մեկն է: Մանկապարտեզների և հրապարակների խոշոր մասը պիտի սպասավորի կուլեկտիվ տնտեսությունների բնակչությունը:

Բ. ՄԱՆԿԱՑՆԵՐ

Մանկատների զարգացման տեմպը մինչև այժմ և ներկայումս պայմանավորվում է լեռնիսաների անապաստանությունը:

Մանկատների ցանցը

	Հիմնարկ.	լեռնիս.
Նորմ. լեռնիս. մանկատն.	1927-28	7 4.663
	1932-33	7 2.496
Դեֆեկտ. » »	1927-28	1 68
	1932-33	5 430

Մանկատների կոնտինգենտի հնգամյակի վերջում նվազումը վկայում է անապաստանության վերացման մասին, վորպիսի հանդամանքը կապված է ազգաբնակչության նյութական զրուծության բարելավման հետ: Սակայն հետապայում, մանկական անապաստանության իսպառ վերացումից հետո, մանկատները պետք է վերակազմվեն և դառնան բանվորների և չքավոր գյուղացիների լեռնիսաների համար հասարակական դաստիարակչական տներ, վորտեղ սաներից պետք է պատրաստվեն գյուղի և քաղաքի համար կուլտուրական ուժեր: Ինչ վերաբերում է դեֆեկտիվ լեռնիսաների մանկատներին, այդ վերջինները պետք է զարգանան քանակապես և վորակապես լեռնիսաների դեֆեկտիվ և դժվար դաստիարակվող մանուկների լրիվ ընդգրկման համար:

Գ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՈՒՆԱԿԱՆ ՌԵՍՄԵՆ ԴՊՐՈՑ

Անդրկովկասի ՄԽՖ Հանրապետության մեջ այժմ դեռ չի անցկացրած ընդհանուր պարտադիր ուսման կիրառման պայմանների և ժամկետի համաֆեդերալիզացիայի որոշողական ախտ: ՀՍՍՀ Պետպլանի և ԱՍԽՖՀ պրեզիդիումները վորոշել են պարտադիր ուսման կիրառման համար 8 տարվա ժամանակամիջոց (1928-29—

1935-36 թ. թ.). Վրաստանի համար ժամկետը վորոշված է 7 տարի (1928-29—1934-35 թ. թ.) և Ադրբեյջանի համար 9 տարի (1928-29—1936-37 թ. թ.):

Յեթե մենք հաշվելու լինենք, թի վորչափով է ընդգրկում դպրոցը սովորողներին, մենք կստանանք ընդգրկման լերկու աղյուսակներ, այն է՝ պայմանական ընդգրկում և փաստական ընդգրկում*):

Այդ տեսակետից մենք ունենք:

	Պայմանակ. ընդգրկում			Փաս. ընդգրկում		
	27/28	32/33	35/36	27/28	32/33	35/36
Ցերեան	132,8	100	100	60,0	100,0	100,0
Այլ քաղաք.	101,5	100	100	55,5	100,0	100,0
Գյուղ. վայրեր	80,5	95,4	100	44,0	84,6	100,0
Ընդամենը	84,7	95,0	100	45,8	85,2	100,0

Այս աղյուսակը ցույց է տալիս, վոր Հայաստանում դպրոցում սովորողների քանակը կազմում էր 8—11 տարեկան բնակչության 1927-28 թ. 84,7 տոկ, 1932-33 թ. կազմելու յե 95,0 տոկ: Նույն աղյուսակից մենք տեսնում ենք, վոր դպրոցում 8—11 տարեկան սովորողները կազմում են 8—11 տարեկան բնակչության

*) Պայմանական ընդգրկում նշանակում է դպրոցում բոլոր սովորողների քանակը վերածված 8—11 տարեկան բնակչության ամբողջ քանակի տոկոսի, միևնույն է, սովորողները 8—11 տարեկան են թե այդ հասակից բարձր: Փաստական ընդգրկում նշանակում է դպրոցում միայն 8—11 տարեկան հասակի սովորողների քանակը՝ վերածված նույն հասակի բնակչության քանակի տոկոսի:

չուժյան 1927-28 թ. 45,8 տոկ, 1932-33 թ.՝ 85,2 տոկ. և միայն 1935-36 թ.՝ 100 տոկոս:

Այդ ավյալները ցույց են տալիս, թե վորքան խոշոր տոկոս են կազմում 1927-28 թ. մեր ընդհանուր նախնական ուսման դպրոցում մեծահասակ (8—11 տարեկանից բարձր) աշակերտները: Այդ տոկոսը 1932-33 թ. բավականին իջնում է (54,2 տոկոսից 1927-28 թ. մինչև 44,8 տոկ. 1932-33 թ.) և միայն 1935-36 թ. բոլոր 8—11 տարեկան լերկսաները ըստ 5-ամյա պլանի ընդգրկվում են 100 տոկոսով:

Այդպիսով ըստ 5-ամյա պլանի ԽՍՀՄ Պետպլանի դիրեկտիվ ցուցմունքները՝ անցկացնել 1932-33 թ. պարտադիր նախնական ընդհանուր ուսումը քաղաքներում և մատչելի դարձնել այն գյուղական վայրերում՝ լրիվ չափով կատարվում են և ընդհանուր պարտադիր ուսման կիրառումը 1935-36 թ. ապահովվում է:

Պարտադիր ուսման կիրառումն առաջիկա հնգամյակում պահանջելու յե⁹ աշխատանքի մեծախոսերի խոշոր լարվածություն: Բանն այն է, վոր 8—11 տարեկան բնակչությանը սկսած 1926-27 մինչև 1928-29 թ. ներառյալ վոչ միայն կրճատված քանակներ է ցուցահանում, այլ և այս տարիների ընթացքում չի յեղ աճում: Այս հանդամանքը վոչ այլ ինչ է, յեթե վոչ իմպերիալիստական և քաղաքացիական պատերազմներին հետևանք: Միայն 1929-30 թ.վականից այդ հասակի աղքատնակությունն սկսում է բուռն կերպով աճել: Այդպես՝ թվերը հետևյալ պատկերն են ցույց տալիս, —

8—11 տարեկան բնակչություն

1926-27 թ.	69 124
1927-28 »	72,854
1928-29 »	71,826
1929-30 »	78,387
1930-31 »	82,525
1931-32 »	95,500
1932-33 »	106,771
1933-34 »	110,939

Ընդհանուր պարտադիր ուսման մի աշակերտին
ընկնող ծախսերի նորման հետևյալն է.

1928-29 թ. 22 ո. 60 կ.

1932-33 թ. 45 ո. 50 կ.:

Հնգամյակի ընթացքում ընդհանուր նախնական
ուսման ամբողջ ծախսը (առանց շինարարություն (կադ-
մում է՝

Քաղաքում 2 455,900 ո.

Դյուղում 18 491,500 »

Ընդամենը 20,947,400 »

Այստեղ կան վորոշ թերություններ և բացեր,
վորպիսիք պիտի վերացնել հնգամյա պլանը վերա-
մշակելիս և կատարել համապատասխան շտկումներ ո
լրացումներ

Մեր Ժողովուրդը դեռևս պարտադիր ընդհանուր
ուսման մասին դեկրետ չի հրատարակել: Կասկած չկա,
վոր մեզ մոտ ևս պարտադիր ուսման ժամկետի կրթ-
նատու կհրահանգվի: Այդ նշանակում է, վոր մոտիկ
ապագայում մեզ մոտ ևս այդ բնագավառում տեղի
կունենան կուլտուրական հեղափոխության խորը փո-
փոխություններ:

ԲԱՐՁՐ ՑԻՊԻ ԴՊՐՈՑ

(Յոթնամյա, գյուղերի, ինն և տասնամյա դպրոցներ)

Միջնակարգ դպրոցն իր զարգացման առաջարի-
զում պետք է սահմանափակված լինի հետևյալ պայ-
մաններով.

1. Միջնակարգ դպրոցը պետք է ըստ հնարավո-
րության մատչելի լինի նախնական դպրոցն ավար-
տողների աչն մասի համար, վորը չի ուղղվում պրոֆ-
տեխնիկական ստորին դպրոցը:

2. Միջնակարգ դպրոցի պրոդուկցիան (ավար-
տողները) պետք է համաձայնեցված լինի Ժողովրդա-
կան տնտեսության անմիջական կարիքների հետ, վո-
րը նա (տնտեսությունը) ունի միջակ վորակի բան-
վորների նկատմամբ (գյուղերի դպրոց, ինն կամ
տասնամյա դպրոցները այս կամ այն թեքումով):

3. Միջնակարգ դպրոցը Ժողովրդական լուսավո-
րության սիստեմի հետևյալ աստիճաններին մատա-
կարարում է ուսանողություն:

4. Միջնակարգ դպրոցը չպետք է գերաբարձրի
լերիտասարդություն, վորը դեպի հետագա ավելի
բարձր դպրոցական հիմնարկներ ընդունելություն չի
գտնելու, կամ տնտեսության մեջ այս կամ այն աշ-
խատանքին անցնելու պատրաստություն չի ձեռք
բերել:

5. Վերջապես, կարևորն այն է, վոր միջնակարգ
կրթության զարգացման լիմիտը (սահմանը) հանդի-
սանա նրա աշխատանքի վորակի բարձրացումը, նրա
շենքերով, սարքավորումով և վորակյալ ուսուցչական

կազմում ապահովվածությունը և, վերջապես, նրա աշակերտությունը սոցիալական կազմը (ստիպելիքով ֆոնդ):

1928 թ. նոյեմբերին տեղի ունեցած անդրկովկասյան սոցիալական կյանքի խորհրդակցությունը ընդունեց նախնական և բարձր տիպի դպրոցների կոնսերվացիաների, Ռ. Ս. Ս. Հանրապետություն մեջ պարտադիր ուսման մասին արված դեկրետով հաստատված նորման, այն է 100: 12,5:

Այսինքն նախնական դպրոցի աշակերտության 100 մարդուն ընկնում է միջնակարգ դպրոցում 12,5 սովորող:

Փաստորեն Հայաստանում 1927/28 թ. այդ նորման եր 14,5, Վրաստանում 24,9, Ադրբեյջանում 8,0. 1932/33 թ. այդ հարաբերությունը լինելու յե Հայաստանի համար 14 0/0, Ադրբեյջանի համար 11,3 և Վրաստանի համար 18,5:

Նախնական ընդհանուր դպրոցի վերջին խմբակներից անցնում են միջնակարգ հանրակրթային և ստորին պրոֆեսիոնական դպրոցների անալիզին խմբակները 0/0/0 ունենում:

Դպրոցների տիպը	28/29 թ.	32/33 թ.
Միջնակարգ դպրոց	30,5	31,7
Ստ. պրոֆեսիոնական դպրոց	9,0	10,7
Ընդամենը	39,5	42,4

7-ամյա և գյուղատնտ դպրոցների 1000 սովորողներից սովորում են՝

	27/28 թ.	28/29 թ.	32/33 թ.
9-ամյակներում	102	110	68
Տեխնիկոսներ.	190	207	273
Ընդամենը	292	317	341

Վերջին աղյուսակի տվյալներից մենք տեսնում ենք, վոր հեռանկարային տարիների ընթացքում 9-ամյակների աշակերտության քանակը նվազում է և, հակառակը, տեխնիկոսների աշակերտության քանակը՝ աճում: Այդ հեռանկարը միանգամայն առողջ է, քանի վոր տեխնիկոսները պատրաստում են տնտեսության համար միջակից բարձր վորակյալ բանվորական ուժ (տեխնիկական կադր):

9-ամյա դպրոցները բարձրագույն դպրոցներին (բանվորական ֆակուլտետների հետ միասին) մատակարարում են ուսանողական կադրեր, բացի դրանից արտադրում են անմիջապես կյանքի համար միջակ վորակի աշխատավորներ՝ նախնական ընդհանուր դպրոցների ուսուցիչներ (ույնքան, վորքան մանկավարժական տեխնիկոսները չեն լրացնում այդ պահանջը), կոոպերատորներ, հողաշափներ (նայած թե ինչ թեքում ունի այդ դպրոցը):

Հետաքրքրական է, թե ինչ հարաբերություն է ստեղծվում բարձրագույն դպրոցների և միջնակարգ (բարձր տիպի) ու միջակ պրոֆեսիոնական դպրոցների կոնսերվացիաների (աշակերտության) միջև 0/0/0 ունենում:

	Հայաստան	Ադրբեյջան	Վրաստան
1927/28	41	42	65
1932/33	34	23	64

Այս հարաբերությունը, վերը 1927/28 թվի համար աննորմալ պլանի համարել, և վերը պայմանավորված եր համալսարանների չափազանց մեծ լցվածությունից, Հայաստանի և Ադրբեջանի համար վերոջ հափով առողջանում է:

Բավական և ասել, վեր Ուկրաինայում ազգաբնակչության 10000 մարդուն ընկնում է 10 ուսանող ԲՈՒՀ-երում, Գերմանիայում՝ 13, Հայաստանում՝ 15, Ադրբեջանում՝ 16, Վրաստանում 34: Պարզ է, վեր այս թվերն իսպառ չեն վկայում Անդրկովկասում բարձրագույն կրթության «բացառիկ բարեկեցություն» մասին, այլ, ընդհակառակը, մոնոկ հասակ ունեցող բարձրագույն կրթության համար ռացիոնալիզացիայի և բյուրեղացման խնդիրն են դնում:

5-ամյա պլանի մեջ մի աշակերտի վրա ծրագրված ծախսերը հետևյալ պատկերն են տալիս.

	1928/29 թ.	1932/33 թ.
3-թնամյա դպրոց	{ գյուղ 69 ո. 75 կ. 137 ո. 46 կ. քաղաք 63 ո. 16 կ. 114 ո. 48 կ.	

9-ամյա » քաղաք 70 ո. 2 կ. 136 ո. 13 կ.:
Ծախսերի նորմաների այդորինակ բարձրացումը հանդիսանում է միջնակարգ կրթության վարակական փոփոխությունների ամենահաստատուն զբաղակալը:
Ներքև բերվում է բարձր տիպի դպրոցների դե-նամիկան 5-ամյակի ընթացքում:

	1927—28			1932—33		
	Հիմ-նարկ.	Ուսու-ցիչ	Աշակ.	Հիմ-նարկ.	Ուսու-ցիչ	Աշակ.
7-ամյա դպրոց	27	308	6330	27	362	6874
Գյուղային դպրոց	97	183	3203	58	406	6081
2-րդ աստ. դպրոց (9-ամյակ)	9	61	975	10	66	875

Բ. ՊՐՈՓԵՍՍԻՈՆԱԼ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Լուսավորության հեռանկարային 5-ամյա պլանի կենտրոնական տեղը զբաղում է վորակյալ բանվորական ուժի արտադրությունը:

Ժողովրդական տնտեսության ռեկոնստրուկցիան, նրան ուղեկցող տեխնիկայի մեջ կիրառվող խորը փոփոխությունները, արտադրության կազմակերպու-թյան արմատական վերակառուցումը պահանջում են, ինչպես վերին ասված է, բանվորական ուժի կազմի մեջ խոշոր քանակական և վորակական փոփոխու-թյուններ:

Հնգամյա պլանում բանվորական ուժի արտա-դրության համար ծրագրված են յերկու ուղիներ.

ա) Արտադրության մեջ զբաղված բանվորների արտադրողական կվալիֆիկացիայի բարձրացումը կար-ճատե և յերկարատե պրոֆտեխնիկական դասընթացք-ների միջոցով:

բ) Բանվորական ուժի արտադրությունը պրոֆ-տեխնիկական կրթության նորմալ դպրոցների միջոցով:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՈՐԱԿԵՐԱԿԱՆ ԲՆԱԳԻԹԻ ՊԸՆՆՁԻ
ՁԵՎԱԿՆԵՐՊՄԵՆ ԽՆԴԻՐԸ

Կադրերի պատրաստման այս կարևորագույն խնդիրը լուսավորության 5-ամյա պլանումն իր լու-ծումն ստանալու համար դնում էր պահանջ, վորպես-զի Լուսժողկոմատն իր ծրագիրը ծավալելու համար իր արամադրության տակ ունենար ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի տնտեսական հիմնար-կությունների կողմից ստույգ կերպով պարզած և

կոնկրետ թվերով արտահայտած իրենց հնգամյակի ընթացքում ունեցած բանվորական ուժի պահանջը ըստ կվալիֆիկացիայի, ըստ պրոֆեսիաների և ըստ մասնագիտությունների: Միայն այդպես քանակական և վորակական ձևեր ստացած պահանջների հիման վրա, այդ պահանջներն իբրև հիմք ունենալով, լուստողվումառը կարող կլինեն իր լուսնիմարերների ցանցը լիապես ծրագրել 5-ամյա պլանի մեջ, վորպեսզի բավարարություն տար ժող. տնտեսության 5-ամյա ընթացքի բանվորական ուժի պահանջին, պատրաստելով համապատասխան կազմեր: Սակայն, դժբախտաբար, հարցի այդ ձևի լուծումը տեղի չունեցավ:

Այդ և պատճառը, վոր լուսավորության հնգամյա պլանում բանվորական ուժի արտադրության հատվածը ամենաթույլ կերպով և մշակված:

ԸՆԴՐՈՑՑՊԼՆԻ ՍՈՑԿՈՒՍՅԱՆՈՒՄԻ ՄՈՏԱՎՈՐ ՀԵԾՎԵՐ-ԿՈՒՄՆԵՐԸ

Անդրպետպլանի սոցկուլտսեկցիան մեծ դժվարություններով հաջողել և ստանալ տնտեսական սեկցիաներից ժող. տնտեսության մոտավոր պահանջները: Ընդունելով այդ պահանջները վորակյալ բանուժի արտադրության պլանի մշակման հիմք, սոցկուլտսեկցիան պետք և սահմանափակվել միայն ընդհանուր և մոտավոր հաշիվներով, վորոնք անհրաժեշտ են դառնում ժողտնտեսության վորակյալ բանուժի ամենասուր պահանջների բավարարման համար: Հ. Ս. Խ. Հանրապետության պրոֆտեխնիկական կրթության լուսնիմարերի ընդհանուր աճումը հետևյալ ծրագրին և տալիս:

Դպրոցների տիպը	1927/28 թ.	1932/33 թ.	աճումը %/0
Ֆարգործուս	196	681	347,4
Գյուղերի դպրոց	3203	6081	189,9
Պրոֆդպրոցներ	1450	2515	173,5
Յերկարատև կուր.	420	5183	1234,0
Կարճատև կուրսեր	869	12000	1380,9
Տեխնիկումներ	1909	3868	202,6
ԲՈՒՀ-եր	1373	1704	124,1

Արդյունաբերության հիմնական ճյուղերի բանվորների ընդհանուր թիվը.

	1928/29 թ.	1932/33 թ.
Ճյուղեր		
Լեռնային արդ.	1986	2366
Մետաղի »	257	272
Շինար. նյութերի »		
»	416	845
Անտառ »	174	326
Քիմիական »	91	294
Բամբակա-գործ »	2260	6979
Կաշեգործ »	121	170
Պոլիգրաֆ »	146	213
Ընդամենը	5758	19.462

Վերև բերված տվյալների հիման վրա, հաշվի առնելով արդյունաբերության յուրաքանչյուր տվյալ ճյուղում վորակյալ բանուժի տեսակարար կիսը, բնական նվազեցման միջին տոկոսը և աշխատանքի շուկայի դրուժյունը, վորակյալ բանուժի պահանջը 5-ամյակի ընթացքում առանց բաշխման ըստ տարիների ստանում և հետևյալ նպատակները.

ԳՐԱԳԱՆՆԵՐ

Լեռնային արդյունաբերություն	306
Մետաղի »	32
Շինար. նյութերի »	139
Քիմիական »	129
Բամբակազործ. »	3.362
Պղինձագործ. »	47
Շինարարության մեջ	5.167
	9.182

Տրանսպորտը և ժողովրդական կապը կարիք ունեն միայն առկա կազմի բնական նվազեցման ծածկման և բանվորների վորոշ մասի վերապատրաստման: Վորակյալ բանուժի այդ պահանջը ծածկելու համար ստորին ինդուստրիալ կրթության աճումն ուրվագծված է հետևյալ կերպով.

	27/28	32/33
Ֆաբգործուս	196	651
Կարճատև կուրսեր	—	6000
Ստորին ֆաբգործուս	—	512
Քրիզադ. և անհատ. աշակերտ.	—	410
		Ընդամենը 7603

Ընդունելով, վոր չծածկված պահանջը, այն է՝ 1579 բանվոր կպատրաստվեն ծրագրվող շինուսնեում, երկտրոտեխնիկական պրոֆգպրոցում և բացվելիք լերկարատև կուրսերում, պլանն ընդունում է, վոր ստորին պրոֆտեխնիկական կրթությունը կկարողանա ծածկել միջակ վորակի բանվորական ուժի պահանջը արդյունաբերության մեջ:

Ինչ վերաբերում է գյուղատնտեսության միջակ վորակի բանուժի պահանջին, վորը պետք է ծածկվի

ստորին գյուղատնտեսական կրթության արտադրությամբ, մենք ունենք հետևյալ պատկերը:

28/29 թ. այդ կադրի քանակն է 497: Հնգամյակի ընթացքում 1932/33 թվի պահանջն է 4843 մարդ: Անհրաժեշտ է պատրաստել 4299 վորակյալ բանվոր: Սրա դիմաց գյուղատնտեսական դպրոցները կարտադրեն 1633, գյուղյերիտ դպրոցները՝ 1026 և կարճատև ու լերկարատև կուրսերը՝ 1640 մարդ: Այդպիսով գյուղատնտեսության միջակ վորակի բանվորական ուժի պահանջը լրիվ բավարարվում է:

Անհրաժեշտ ենք համարում ասել, վոր գյուղատնտեսության բանվորական ուժի հայցերը և բավարարումը մենք բերում ենք այստեղ վոչ 5-ամյա պլանի տվյալներից, այլ 1929/30 թ. հոկտեմբեր ամսում Հող-ժողկոմատի կողմից կազմած և Լուսժողկոմատի կողմից հաշվի առնված տվյալներից:

Ստորին վոչ-ինդուստրիալ և վոչ գյուղատնտեսական կրթության արվելիք պահանջները, այն է՝ առևտրի և կոոպերացիայի կողմից, նույնը և տնայնագործության կողմից— բոլորովին չի մշակված և չի ձևակերպված: Առևտրի համար ծրագրվում է պատրաստել կոոպերացիայի ցանցի համար վաճառողներ, վորոնք պիտի անցկացվեն տարեկան դասընթացքներում (50-ական մարդ). բացի դրանից այժմս զբաղված պետառևտրի և կոոպերացիայի աշխատողներին պետք է վերապատրաստել 3—4 ամիս տևող կուրսերում:

Ժողովրդական Տնտեսությունը Հարստացման Կերպը

Նոսքը միջակից բարձր և բարձրագույն վորակի աշխատանքների մասին և:

Պրոֆտեխնիկական դպրոցական հիմնարկների կոնստիդենտների հարաբերությունը 1927/28 թվի աննորմալ պատկերը 1932/33 թ. ավելի նորմալ և առողջ բնույթ և ստանում:

Դպրոցակ. հիմնարկ-

ների տիպերը	1927/28	1932/33
ԲՈՒՀ-եր	20,2	11,6
Բանֆակներ	9	5,2
Տեխնիկոմներ	25,9	26,3
Ստորին պրոֆտեխ-		
նիկակ. դպրոց	44,9	56,9
	100 %	100 %

Լուսավորության հնգամյա պլանում մենք չենք գտնում ինժեներների և տեխնիկների թե ներկայումս արտագրական հիմնարկներում դրադված և թե հնգամյակի ընթացքում պահանջվող կադրի հաշվառումը: Այդ աշխատանքը ժամանակին չի կատարված (վերև բացատրված պատճառներով) և հնգամյա լուսավորության պլանի ամենաթույլ կողմն և ներկայացնում: Սակայն այստեղ մենք բերում ենք այն տվյալները, վոր Ժողովրդի հանրակրթության ներկայացրեց Պետպլանին 1929/30 թ. սկզբին:

Ժողովրդի մեջ յեղբայրական հեղափոխության կադրեր.

	1928/29 թ. առկա կադրեր	Հնգամյակի վերջի 4 տարիների պահանջվող կադրեր
ա) Քիմիկոսներ	11	55
բ) Մեխանիկներ	5	18
գ) Ելեկ. և հիդրավլիկ	6	19
դ) Շինարարներ և հա- ղորդ. ճանապարհ	27	49
ե) Լեռն. ինժեներ և չիրկրաբաններ	18	23
զ) Ինժեներ. ագրոնոմ	—	4
	67	168

Ժողովրդի մեջ յեղբայրական հեղափոխության կադրի որեցուցիչ հաշիվը.

ա) Քիմիկոսներ	26	60
բ) Մեխանիկներ	2	7
գ) Ելեկտ. և հիդրավլիկ	8	41
դ) Շինարարներ և հա- ղորդ. ճանապարհ	26	48
ե) Լեռն. ինժեներ և չիրկրաբան	14	38
զ) Ինժեներ. ագրոնոմ	10	10
	88	204

ՅԵԽԱԳԻԿՆԵՐԻ ԿԱՂՐՔ.

	1928—29		1932—33	
	Ժողովուրդի թիվը ձեռնարկվող ներքին համար	Ժողովուրդի թիվը ձեռնարկվող ներքին համար	Ժողովուրդի թիվը ձեռնարկվող ներքին համար	Ժողովուրդի թիվը ձեռնարկվող ներքին համար
ա) Քրիստոնյաներ	14	3	60	8
բ) Մեխանիկներ	9	1	41	4
գ) Երեւո. և հիդրավ.	4	24	46	60
դ) Շինարար. և հա- ղորդ. ճանապարհ.	42	53	98	71
ե) Լեռնային ար- դյունաբերութ.	7	6	52	7
	76	87	297	150

Այսպիսով պահանջվում են ինժեներներ 372 մարդ
և տեխնիկներ 447 մարդ:

Ինդուստրիալ տեխնիկական կրթությանը տրված
է պլանում հետևյալ աճումը.

	27/28	32/33
Յերկարատե կուրսեր	—	1530
Տեխնիկումներ	274	936
Այդ թվում վերջին կուրսերում	60	128
Պետ. համ. տեխնիկում	222	412
Այդ թվ. վերջին կուրս.	7	51

Հինգ տարվա ընթացքում տեխնիկումները վերջին
կուրսերում 382 մարդ, իսկ տեխնիկական վերջին կուր-
սերում՝ 96 մարդ:

Տեսնում ենք, վոր ըստ 5-ամյա պլանի, մենք
ունենալու յենք ղեֆիցիտ ինժեներների կազրի մեջ
276, իսկ տեխնիկների՝ 65:

Նկատի առնելով, վոր այս տարի պետհամալսա-
րանում տեխնիկին կից բացված է քիմիական բա-
ժանմունք և ներկա տարում ծրագրվում է բանալ իր-
րիզացիոն ֆակուլտետ, ինժեներական կազրի դե-
ֆիցիտի հարցի սրությունը վորոշ չափով կմեղմանա,
սակայն վոչ Միության ԲՈՒՀ-երում արվելիք կոնստրակ-
տացիաները և վոչ ղրսից մասնագետների ծրագրվող
հրավիրումները չեն կարողանալու ծածկել ինժեներական
կազրի դեֆիցիտը: Թվական այս տվյալները սիգնալ են
տալիս ինժեներական կազրի դեֆիցիտի վտանգի մասին,
և Լուսժողկոմատն իր մոտիկ ապագայում վերամշակելիք
5-ամյա պլանում պիտի այս հանգամանքը հաշվի առնի:

Ավելորդ չենք համարում հիշատակել հնգամյակի
ընթացքում գործող ինդուստրիալ տեխնիկումների ա-
նուններն իրենց կոնտինգենտներով:

	29/30	30/31	31/32	32/33
1. Քիմիական տեխ- նիկում Յերևանում	40	76	109	139
2. Լեռնարդյունաբեր. տեխնիկ. Յերևանում	40	76	109	139
3. Յերեկ. բանվ. տեքս- տիլ տեխն. Լենինակ.	80	156	156	156
4. Ճանապարհ-շինարար. տեխնիկ. Յերևանում	—	40	76	109
5. Ինդուստրիալ շինար. տեխնիկ. Յերևանում	130	136	140	139
6. Երկաթուղիային տեխնիկական տեխնիկ. Յերևանում	130	136	139	139
7. Լեռնաշին. նյութերի տեխ. Լենինականում	107	109	139	139

ՀԱՐԱՆԱԾԱՐԱՆԵՆ ԿԱԶՄԸ ԴՈՌՈՂԱՆՆԵՍՈՒԹՈՒՆ ՄԵՋ

Բարձրագույն կրթությամբ գյուղատնտեսների պահանջը ըստ վերև հիշված Հողօրոգիության կողմից կազմված աղյուսակի տալիս և հետևյալ պատկերը:

28/29 թ. առկա կազմը հասնում է 312, հնգամյակի վերջին չորս տարվա ընթացքի պահանջն է 1005, զեֆիցիտը կազմում է 693: Այս պահանջը ծածկելու համար համալսարանի գյուղֆակն արտադրում է 354 գյուղատնտես, չերկարատև կուրսերը՝ 88: Մնում է չծածկված զեֆիցիտ 251 գյուղատնտեսի:

Դժվար է մտածել, Վոր 251 գյուղատնտես հետաքրքիր կլինի հրավիրել զբոսից: Ավելի ճիշտ կլինի ասել Վոր զբոսից հրավիրելու հոգյան ըստ ամենայնի անհիմն է: Անհրաժեշտ է այդ զեֆիցիտի մասին հոգալ յերկրի ներսում: Դրսի ԲՈՒՀ-երում կոնտրակտացիաները կարող են տալ այդ պահանջի մինիմալ չափը: Ինչ վերաբերում է գյուղատնտեսական տեխնիկական կադրին, մենք ունենք հետևյալ պատկերը.

1928/29 թվի առկա կազմը կազմում է 49 մարդ: Պահանջվում է հետագա չորս տարիների ընթացքում 1085 գյուղատնտես-տեխնիկ: Դեֆիցիտը կազմում է 1036 մարդ: Դյուղատնտեսական տեխնիկոսները կարող են տալ 321 շրջանավարտ: Մնացած գյուղատնտես-տեխնիկներին ծրագրվում է պատրաստել կուրսերի միջոցով 515 մարդ, գյուղյեղիտ դպրոցների միջոցով՝ 166 մարդ և Հայաստանից դուրս՝ 34 մարդ:

Անասնաբուժական բժշկիկները 1928/29 թ. առկա կազմը կազմում էր 59 մարդ. հնգամյակի պահանջն է 163, զեֆիցիտն է 104, Վորը ծածկելու համար ծրա-

դրվում է հրավիրել զբոսից 35 մարդ և մնացած 69 պատրաստել հատուկ կուրսերում: Անդրկովկասյան անասնաբուժական ինստիտուտն իր առաջին շրջանավարտներին տալու չէ հետևյալ հնգամյակին առաջին տարում, հետևապես այս հնգամյակում ինստիտուտը հաշվի առնել չի կարելի:

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՄԻ ԿՈՆԵԻՑԳԵՆՏԸ

	28/29	29/30	30/31	31/32	32/33
I կուրս	130	130	130	130	130
II »	—	122	122	122	122
III »	—	—	116	116	116
IV »	—	—	—	112	112
V »	—	—	—	—	110

Ընդամենը 130 252 368 480 590

Վետերինարներ միջնակարգ կրթությամբ պահանջվում են 141 մարդ: Այդ կոնաինգենտը ծրագրվում է պատրաստել բացվելիք դասընթացներում:

ԱՅՈՒ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՃՈՒՄԸ

Այլ մասնագիտությունների ճյուղերով բարձր և միջնակարգ մասնագիտական կրթության (մանկավարժական, տնտեսագիտական, արվեստագիտական, արվեստի և այլն) աճումը հնգամյա պլանում ընդունված է հետևյալ ձևով.

	27—28 թ.	32—33 թ.
Յերկարատև կուրսեր	420	3653
Տեխնիկոսներ	1372	2041
ԲՈՒՀ-եր	902	974

Մանկավարժական պերսոնալի հնգամյակի պահանջը, վորը պետք է ծածկվի տեխնիկումների, համալսարանի մանկավարժական ֆակուլտետի և այլ ֆակուլտետների շրջանավարտներով.—

Մանկավարժական տեխնիկումներից պահանջվում է	1459	ուսուցիչ
Համալսարանից պահանջվում է	354	»
Այլ ֆակուլտետներից և տեխնիկումներից պահանջվում է	446	»

Ընդամենը 2.259 ուսուցիչ

Այս պահանջը ծածկելու համար մենք ունենք՝
27—28 թ. 32—33 թ.

Մանկավարժ. ֆակուլտետի կոնստիդենտը	277	514
Այդ թվից վերջին կուրսում	40	97

Հինգ տարվա ընթացքում վերջին կուրսերում լինելու չեն 351 մարդ, այս քանակը բավարարում է չեղած պահանջը:

Մանկավարժ. տեխնիկումն. կոնստիդենտը	771	1216
Այդ թվից վերջին կուրսում	40	240

Հինգ տարվա ընթացքում վերջին կուրսերում լինելու չեն 1.059 մարդ: Այդ քանակը, ինչպես տեսնում ենք, պահանջը ծածկելու համար բավարար չէ. մնում է չծածկված մոտ 400 ուսուցչի պահանջ:

Այդ չծածկված պահանջը ծրագրվում է բավարարել մանկավարժական թեքում ունեցող 9—10-ամյակների շրջանավարտներով: Սոց. օնտոսոգիտական կրթության նկատմամբ պահանջը չի ձևակերպված:

Նույնը պետք է ասել և զեղարվեստական կրթության վերաբերյալ:

ԲԺՅԱԿԱՆ ՊԵՐՍՈՆԱԼԻ ՊԵՀԱՆՋՆ ՈՒ ԲԱՎԱՐԱՐՈՒՄԸ

Բժշկական պերսոնալի պահանջը հետևյալն է.

	28/29	29/30	30/31	31/32	32/33	
Բժիշկներ	51	64	66	74	78	ընդ. 335
Միջ. պերսոն.	57	86	81	92	100	» 426

Բժշկական ֆակուլտետի կոնստիդենտն է.

27—28 թ. 32—33 թ.

Բժֆակի ուսանողությունը	241	275
Այդ թվից վերջին կուրսում	32	33

Հինգ տարվա ընթացքում վերջին կուրսում լինելու չեն 158 ուսանող:

Ինչպես տեսնում ենք, այս բնագավառում մենք ունենք խոշոր պակաս:

Մեկ ուսանողին ընկնող ծախսերի նորման տալիս է հետևյալ պատկերը.—

	1928/29	1932/33
Ֆարգործում	826 ռ. 47 կ.	896 ռ. 93 կ.
Գյուղատնտ. դպր.	139 » 11 »	249 » 74 »
Ինդուստ. տեխն.	238 » 98 »	344 » 45 »
Մանկավարժ. »	217 » 17 »	381 » 57 »
Բանֆակ	203 » 83 »	348 » 40 »
Համալսարան	553 » 68 »	1096 » 33 »
Կոնսերվատորիա	291 » 14 »	460 » 68 »

Վորակյալ բանվորական ուժի բարձր և միջակից բարձր կվալիֆիկացիայի պատրաստման գործին ընդհանուր հնգամյակի բյուջեից ընկնում է 8,199.900 ռուբլի:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Քաղաքական լուսավորությունը գծով Լուսավորության կոմիտեի անդամների հարվածային և բարդ խնդիրն է ազգաբնակչության անգրագիտության լիկվիդացիան, այսինքն վերացումը:

Ըստ Լուսավորության տվյալների 16—39 տարեկան հասակի անգրագիտ ազգաբնակչության քանակը կազմում է 191,900 մարդ, 12—15 տարեկան անգրագիտների թիվը հասնում է 23,200 մարդ: Այդպիսով 12—39 տարեկան հասակի անգրագիտ բնակչության թիվը կազմում է 215,100:

Բացի դրանից անգրագիտության վերացման յենթակա յեն նաև կիսագրագիտները, վորոնց թիվը կազմում է 100,000 մարդ: Հետևապես, 315,100 մարդկանց մի հսկայական բանակ պիտի այս հնգամյակում վերացնի անգրագիտությունը և հաղորդակից դառնա սոցիալիստական կուլտուրային:

Ըստ ազգությունների անգրագիտները և կիսագրագիտները բաշխվում են հետևյալ կերպով.

Անգրագիտներ և կիսագրագիտներ միասին		Անգրագիտներ առանձին	
Բացարձակ թիվը	Ամբողջի %	Բացարձ. թիվ	Ամբողջի %
Հայեր 235.511	74,8	163.881	76,2
Թուրքեր 49.102	15,6	32.692	15,2
Ռուսներ 12.114	3,8	3.634	1,7
Այլք 18.373	5,8	14.893	6,9
Ընդ. 315.100	100	215.100	100,0

Անգրագիտների բաշխումն ըստ սեռերի տալիս է՝

Տղամարդիկ 79,854 — 37,1%

Կանայք 135.246 — 62,9%

Ընդամենը՝ 215,100 — 100,0%

Կիսագրագիտների բաշխումն ըստ սեռի՝

Տղամարդիկ 64.720 — 64,7%

Կանայք 35.280 — 35,3%

Ընդ.՝ 100.000 — 100,0%

Անգրագիտների և կիսագրագիտների անգրագիտության վերացումը ծրագրվում է ըստ հնգամյակի տարիների՝

	28/29	29/30	30/31	31/32	32/33	Ընդ.
Անգրագիտներ	22.023	45.610	51.320	52.400	43.747	215.100
Կիսագրագիտներ	9.860	15.370	22.230	25.240	27.300	100.000
Ընդ.	31.883	60.980	73.550	77.640	71.047	315.100

Անգրագիտության վերացման ընդհանուր ծախսը հնգամյակի ընթացքում կազմում է 2.346.428 ու.

Խնչպես տեսնում ենք, 315,100 մարդկանց, այդ ինչպես վերն ասվեց, հսկայական բանակի անգրագիտության վերացումը ֆինանսական և, վորն ավելի կարևոր է, կազմակերպչական տեսակետից չափազանց բարդ դրոժ է: Այդ ձեռնարկումը միանգամայն անհրաժեշտ է կլինի իրագործել, չեթե Լուսավորության կոմիտեի անդամների հետ միասին չլծվելին հասարակական կազմակերպությունները, այն է՝ պրոֆմիությունը, կոոպերացիան և «Կորչի անգրագիտությունը» ընկերությունը, մի ընկերություն, վորն իր ծնունդն է առել խորհրդային հասարակությունից, հին ուսման մեղ

ժառանգություն թողնված, ինչպես հանգուցյալ ընկ. Մուսկյանը սիրում էր ասել, «անամոթ» անգրագիտությունը վերացնելու և հաղթահարելու նպատակով: «Կորչի անգրագիտությունը» ընկերությունն իր վրա այս հսկայական աշխատանքի առյուծի բաժինն է վերցնում, իսկ նրա ֆինանսական ծախսերը, ինչպես տեսնում ենք ներքև բերված տախտակից, չափազանց համեստ են, վորովհետև ղրամի չեն վերածված³ աշխ. անձնվիրությունը և զոհողությունները, վոր հանձն են առել ընկերության անդամները՝ մեր ուսուցիչները, կոմյերտականները և առհասարակ խորհրդային ինտելիգենցիան: Ներքև բերված աղյուսակը ցույց է տալիս, թե ինչպես են բաշխված կազմակերպությունների մեջ անգրագիտության վերացման չենթակա բնակչությունը և նրանց վրա ընկնող ծախսերը:

կազմակերպութուն	Հնգամյակում անգրագիտությունը վերացնողների քանակը	% %	Ծախսերը հազ. ո.	% %
Լուսժողկոմատ	102.784	32,6	1178,8	50,2
Պրոֆմիտություններ	29.366	9,3	353,9	15,1
Կոոպերացիա	38.667	12,3	465,0	19,8
«Կորչի անգր. ընկ.»	144.284	45,8	348,5	14,9
Ընդ.	315.100	100	2.346,4	100

Վերև հիշված կազմակերպությունները Լուսժողկոմատի հետ պայմանագիր են կնքել, վորով պարտավորվում են իրենց վրա վերցրած աշխատանքները լրիվ կատարել: Այդ կազմակերպությունների մեկական ներկայացուցիչներից Լուսժողկոմատի Քաղլուսվարչության կից կազմակերպվում է «Անգրագիտության վերացման արտակարգ հանձնաժողով», վորը հանդես է գալիս իբրև համաձայնեցնող մարմին պայմանագիր կնքող կազմակերպությունների և Լուսավորության կոմիտեարիատի միջև: Այս վերջինիս է պատկանում անգրագիտության վերացման գործի ամբողջ իրեական և մեթոդական ղեկավարությունը և հսկողությունը:

Անգրագիտության վերացումը և պարտադիր նախնական ուսման կիրառումն մեր յերկրում յերկու աշխ. հսկայական իրենց մեծությամբ չգերազանցված ծառայություններն են, վոր մատուցում է խորհրդային իշխանությունը յերկրին:

Վերհիշենք ընկ. Լենինի հետևյալ խոսքերը՝ «Ելեկտրիֆիկացիայի համար արգրադետ մարդիկ պիտանի լինել չեն կարող, և այստեղ միայն գրագիտությունն էլ դեռ քիչ է»... Այս խոսքերով ընկ. Լենինը տալիս է կուլտուրական հեղափոխության աշխ. ծրագիրը, վորը կատարվում է մեր աչքերի առաջ: Այո, անգրագիտության վերացումից հետո հաջորդելու չե իրար յետևից քաղաքական, պրոֆտեխնիկական, գյուրար յետևից քաղաքական, տնայնագործական և այլն և այլն դատնտեսական, տնայնագործական և այլն յետևից անգրագիտությունների լիկվիդացիան: Խորհրդային իշխանությունը նրանով է տարբերվում ուրիշ իբրերների կապիտալիստական իշխանություններից,

վոր նա դարձնում է իր իշխանությունը վոչ թե ժողովրդական մասսաների ճնշման և հարստահարման, այլ նրանց լուսավորության և դաստիարակության գործիք՝ կարճ ժամանակում սոցիալիզմ կառուցելու համար:

Քաղութամտությունը ինքնազարգացման, քաղաքական դավրոցների, կուրսերի և ժողովրդական համալսարանի ամբողջ կլիենտուլայի ընդհանուր գումարը կազմում է հնգամյակի ընթացքում 38,807 մարդ:

Ինչ վերաբերում է քաղութամտության մասսայական ոգտագործման հիմնարկներին (ակումբներ, խրճիթ-ընթերցարաններ, թատրոն, գրադարան, կինո և ռադիո) պետք է ասել, վոր հնգամյա պլանի այդ հատվածը տակավին չի մշակված և հնգամյա լուսավորության պլանում իր տեղը չի գտել: Ներկայումս միայն Լուսժողկոմատը վերամշակելով հնգամյա պլանը՝ մտցնում է պլանի մեջ նաև այդ կարևոր հատվածը:

Ներքև բերում ենք այդ հիմնարկների 1929/30 թ. կոնարով թվերը:

	27/28	28/29	29/30
Խրճիթ-ընթերցարաններ շրջան.	—	35	35
» » գյուղում	152	135	135
Գրադարան կայուն	5	5	7
» շարժակ.	—	13	35
Կինո կայուն	—	—	—
» շարժակ.	7	15	20
Թատրոն կայուն	—	—	—
» շարժակ.	—	2	2
Երաժիշտական բաղա	4	5	6
Ռադիո կայուն	32	50	105
» շարժակ.	5	7	8

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Պետական հրատարակչությունը լույս է ընծալում գիտություն և գրականության բոլոր ճյուղերի գծերով գրքեր: Թե իր պրոդուկցիայի վորակով և թե քանակով այն համեմատության դեմ չի կարելի մինչև խորհրդային նահանգական և Եղմիածնի չերկու ադքատիկ պրիմիտիվ տպարանների հետ, վորոնց պրոդուկցիան չափազանց աննշան էր: Բավական է ասել, վոր մեր պարբերական հրատարակչությունները պատկանելի թիվ են կազմում: Հայաստանում հրատարակվում են լրագրեր «Խորհրդային Հայաստան», «Մաճկալ», «Ավանգարդ», «Կարմիր Զինվոր», «Բանվոր», «Կարմիր Ռանչպար» և թուրքերեն լեզվով «Ղզըլ Շաֆակ», ապա գալիս են հանգեսներ՝ «Նոր Ուղի», «Համալսարանի Տեղեկագիր», «Գիտություն և արվեստի ինստիտուտի տեղեկագիր», «Գյուղատնտեսական կյանք», «Ժողովրդական Լուսավորություն», «Ցերիտասարգ Բալլետիկ», «Լենինյան ուղի», «Գյուղի կոմունիստ», «Աշխատանք», «Գրական Դիրքերում», «Հայաստանի Աշխատավորուհի» և այլն: Պետական հրատարակչության լույս ընծայած գրականության զանազան բաժինների ամբողջական տիրաժի տպագրական թերթերը կազմում են՝

	1927/28	1928/29	1932/33
Հաղար թերթերով	6950	9354	12,855

ԲԱԼԱՆՍԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Աշխատավարձի հետեյալ նորմաներն ընդունված են հնգամյակում:

	28/29	32/33
Նախնական ընդհանուր ուսում	44 ա.	75 ա.
Բարձր տիպի դպրոց	70 »	120 »
Գյուղյերի դպրոց	70 »	125 »
Տեխնիկում	120 »	140 »
Բանֆակ	105 »	120 »
Կուսակցություն	80 »	100 »
Տեխնիկական պերսոնալ 5 % հավելում ըստ տարիների		

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Դպրոցական շենքերի ծախսահղ ծանրաբեռնություն և տեղի ունեցող յերկու-չերեք նվազ պարապմունքների հետևանքով ստեղծվում է այնպիսի դրություն, վոր միջին թվով մենք ունենք ընդհանուր նախնական ուսման դպրոցում մի աշակերտին ընկնող՝ Աղբընջանում 3,4 խոր. մետր, Վրաստանում 2,08, իսկ Հայաստանում 1,28 խ. մետր, մի նորմա, վորը, ինչպես ասում է Անդրպետպլանի բացատրագիրը, «գերեզմանային է»։ Մինչդեռ դպրոցա-սանիտարական տեսակետից պահանջվում է մի աշակերտի համար 9 խոր. մետր։ Անդրպետպլանի շինարարական սկզբի վորոշել է մի աշակերտին 4,23 խ. մետր նորմա ընդունել։

Բայց և այնպես տեղական բյուջեով ծրագրված ծախսերի աճումը նկատի ունենալով, անգամ բնակչության միջոցների դպրոցական շինարարությունը խոշոր մասնակցությամբ հնարավոր է այս հնգամյա կում կառուցել անհրաժեշտ շենքերի 15 % :

Լուսավորության գործի ամբողջ շինարարություն համար պլանով նախատեսված է 9.960,1 հազ. ուրբլի, վորից ընկնում է՝

Պետական բյուջեին	3.237,2 հազ. ա.
Տեղական »	2.929,8 » »
Բնակչ. միջոցներին	3.793,1 » »

ՀՆԳԱՄՅԱԿԻ ԱՄԲՈՂՁ ԲՅՈՒՋԵՆ

Լուսավորության գործի հնգամյակի տարիների ամբողջ բյուջեն կազմում է 71.127,9 հազ. ա., վորը բաշխվում է՝

Աշխատավարձ	39.313,5 հազ. ա.
Ուսուցման մաս	8.924,2 » »
Այլ ծախսեր	12.947,0 » »
Կապիտալ ներդրում	10.943,2 » »
Հնդ.	72.127,9 » »

Այդ ընդհանուր բյուջեն ըստ աղբյուրների բաշխվում է՝

Պետական բյուջե	21.518 հազ. ա.
Տեղական »	34.758 » »
Հաս. կազմ. միջոցներ	6.195 » »
Այլ աղբյուրներ	9.656 » »

Ժողովրդական լուսավորության բյուջեն կազմում է՝

1927/28 թ.	4 434,0 հազ. ա.
1932/33 »	16.368,0 » »
Աճումը՝	368%

Ազգաբնակչության մի շնչին ընկնում է.

27/28 թ. 4 ու. 63 կ.

32/33 » 16 » 68 »

Աճումը՝ 356,4%

«Իվերջո նշանք» վոր հնգամյակի համար այդպիսի մի գումար—72 միլլ. ու, վորը թերևս ՀՍՍՀ Հանրապետության համար չափազանց բարձր համարվի, միանգամայն արդարանում է այն շեշտով, վորը դրնում է XV կուսակցական համագումարն իր դիրքավորումով կուստուրական հեղափոխության նկատմամբ: Այդ հանգամանքը ընդգծեց Անդրապետականի նախագահությունը, վորը գտնում է, վոր լուսավորության ֆրոնտում կատարվելիք հեղափոխական արմատական փոփոխությունների համար անհրաժեշտ են արտակարգ միջոցներ» — այդ խոսքերով յեղբարեակում է Պետականի սոցկուլտոսեկցիան իր լուսավորության հնգամյա պլանի մասին արած գեկուցումը:

Հնգամյա պլանի քննությունից մեկ տարի չե միայն անցել, սակայն մենք տեսնում ենք, վոր իրական կյանքը քայլում է սովելի արագ տեմպով, քան այդ տեմպերը նախատեսված էին պլանի մեջ:

Հնգամյա պլանի ամենաբարդ և ամենադժվար խնդիրներն են պարտադիր նախնական ուսման կիրառումն և ազգաբնակչության անգրագիտության վերացումը: Ըստ պլանի պարտադիր ուսումը Հայաստանում ծրագրվում է մտցնել 1935/36 թ., այնինչ արդեն այսօր դիրեկտիվ որդանների կողմից հարց է դրվում պարտադիր ուսումը անցկացնել 1934/32 թ.,

Հնգամյա պլանը և այն ուղղումները, վոր ներ-

կայումս մտցվում են պլանի մեջ, հաստատուն գրավական են մեր յերկրի կուստուրական վերելքի:

Սորհրդալին պլանային միտքը կանգ չի առնում: Նա արագ է ընթանում նոր և նոր հորիզոններ բանալով: Պլանային մարմինների և համամիութենական խորհրդակցության թեղիսներից մեկը հետևյալն է ասում.

«1929/30 թ. կոնտրոլ թվերում կուստուրական շինարարության բնագավառում նշված է ձեռնարկումների բացառիկ լարված ծրագիր: 1930/31 տ. ընթացքում պետք է տարվեն ընդհանուր պարտադիր ուսման կիրառման ամենալուսանդուն պատրաստական աշխատանքները, անգրագիտության վերացման դպրոցներով պետք է ընդգրկված լինեն 7.500.000 մարդ և բանվորների անգրագիտությունը պիտի իսպառ վերացվի, մոտ տաս անգամ պետք է մեծանա պրոֆեսիոնալ տեխնիկական կուրսերում սովորող բանվորների կոնտինգենտը, նույնը պետք է տեղի ունենա գյուղատնտեսության հասարակայնացված սեկտորի գյուղացիական տկտիվի պատրաստման կուրսերում, ինդուստրիայի և գյուղատնտեսության մասնագետների վերապատրաստման սիստեմը պետք է ամենալայն ծավալն ստանա, վերջապես, բարձրագույն և միջակ տեխնիկական դպրոցների ցանցը պիտի խտանա նոր բացվելիք դպրոցներով — ահավասիկ այդ ուրինակ քանակական փոփոխություններով է բնորոշվում 29/30 տարին, իրեն կուստուրական հեղափոխության խորը բեկման տարի:

«Կազմակերպչական տեսակետից այդ բեկումն հանդիսանում է սովելի նշանակալի, յեթե նկատի առ-

ներկէն վորակական խնդիրները, վորոնք լուսավորութեան ֆրոնտում այս տարում պիտի լուծու՞մ ստանան, կուլտուրական հիմնարկութիւնների շինարարութեան ահագին ծրագիր (400 միլիոնից ավել ներդրումներ), ժողովրդական լուսավորութեան սխտեմի ունիֆիկացիան, դպրոցական ուսուցման կազմակերպութեան և մեթոդների արմատական փոփոխութիւններ (անընդհատ արտադրական պրակտիկա, դպրոցի արտադրութեան և ազդարնակութեան ընդհուպ մոտեցումն, լուսաշխատավորների, հասարակական կազմակերպութիւնների և տնտեսական մարմինների ներկայացուցիչների միացումը կուլտուրական հիմնարկութիւնների ղեկավարութեան գործում և այլն—այս բոլոր վորակական փոփոխութիւնները մինչ այժմս չտեսնված քանակական վերելքի հետ կապակցված պետք է խորապէս վերակառուցեն կուլտուրական ֆրոնտը, բարձրացնելով նրա մակարդակը և հավասարեցնելով այն ընդհանուր յերկրի տնտեսական մակարդակին»:



ՀՀ Ազգային գրադարան



NL0943346

ԳԻՆԸ 10 ԿՈՊ. Մ. (1¹/₄)

ԱԳՀ

117

106 - 1930 թ.



Ա. Ավանисяն

Пятилетний план нар. образования ССРА

Госиздат ССР Армении
Эривань—1930